

PEARLS OF ARMENIAN HERITAGE

Խոսրովիկ (Ութերորդ Դար)

ժամանակակից հայոց գրականության պատմության մէջ Խոսրովիկ կամ Խոսրով Վարդապետ ճանչցուեցաւ միայն 1890էն յետոյ, երբ անոր գրութիւնները ձեռագիրներուն մէջ գտնուեցան եւ հրատարակուեցան:

Ութերորդ դարու եկեղեցական անձնաւորութիւն է Խոսրովիկ. ուսումը ստացած է Հայաստանի մէջ եւ տեղեակ չէ եղած ոչ ասորերէն եւ ոչ յունարէն լեզուներուն. ցոյց չի տար ոչ տաղանդ եւ ոչ մեծ գիտութիւն, բայց կը պայքարի համարձակօրէն, նոյնիսկ Յովհաննէս Օձնեցի Կաթողիկոսին *Ընդդէմ Երեսութականաց* ճառին դէմ: Մասնակցած է Մանազկերտի 726ի ժողովին, եւ ստորագրողներէն 23րդն է, եպիսկոպոսներէն անմիջապէս յետոյ: Իր մասին ուրիշ տեղեկութիւն չունինք, բացի անկէ որ մասնակցած է դարուն դաւանաբանական վեճերուն գործօն կերպով:

Հինգ նամակներ ծանօթ են մեզի մինչեւ հիմա, բոլորն ալ դաւանաբանական հարցեր կը շոշափեն: Առաջինին մէջ կը խօսի Քրիստոսի մարդեղութեան վրայ, պաշտպանելով՝ որ Քրիստոսի մէջ կան մէկ բնութիւն, կամք եւ ներգործութիւն, հերքելով հանդերձ ըլլայ Սեւերեաններու, ըլլայ Յովհաննէաններու տեսութիւնները:

Երկրորդ նամակին մէջ կ'ընդդիմախօսէ անանուն մէկու մը դէմ, որ հոգեւոր պետ մըն է. ոմանք այս հոգեւոր պետը կը համարին որ ըլլայ Յովհաննէս Օձնեցի Կաթողիկոսը, իսկ ուրիշներ՝ ասորիներու Կաթողիկոսը: Օձնեցիի *Ընդդէմ Երեսութականաց* ճառը մեծ ազդեցութիւն պէտք է ունեցած ըլլայ այդ օրերուն, եւ Խոսրովիկի նամակները կէս մը մեկնութիւն եւ կէս մը հակաճառութիւն են այդ գործին:

Քառասնորդացի վարդապետութեան մասին գրութեամբ կը պաշտպանէ շաբաթ եւ կիրակի օրերը եւս պահելու տեսութիւնը, որուն հակառակ էր Յովհաննէս Օձնեցի Կաթողիկոսը: Խոսրովիկ պէտք է վեճեր ունեցած ըլլայ թէ ասորիներուն եւ թէ յոյներուն հետ՝ ծիսական խնդիրներու եւ սովորութիւններու շուրջ. Ծնունդը յունուար 6ին եւ ոչ թէ դեկտեմբեր 25ին տօնելու մասին իր անունով կայ *Հարցումներ Անպիղծի Հայրապետին* տիտղոսը կրող հակաճառութիւն մը:

Խոսրովիկի գրութիւնները կարեւորութիւն ունին դաւանաբանական տեսակէտով, իսկ իր պակաս գիտութեամբ եւ իշխանութեան դէմ դիրքութեամբ դէմ ելլելու իր համարձակութիւնը դարուն հոգիին նշաններէն է. արդարեւ, քաղաքական կեանքին մէջ եւս, իշխանները կը գործեն կեդրոնախոյս մտայնութեամբ, ինչպէս նաեւ եպիսկոպոսները, փորձելով անջատուիլ կաթողիկոսութենէն՝ աղուաններուն եւ վիրերուն օրինակին հետեւողութեամբ, նշան՝ կազմալուծուող ընկերութեան մը:

Գրականօրէն լեզուն արժէք մը չի ներկայացներ. *Հարցումներ*-ուն մէջ տկար ու թոյլ լեզու մըն է, իսկ նամակներուն մէջ անհարթ՝ երբեմն պարզ եւ երբեմն հեղինաբանութեամբ ծանր: Քառասնորդի մասին գրութեան մէջ լեզուն աւելի մաքուր եւ վայելիւ է, կասկած յարուցանելով որ Խոսրովիկի անունով այս գրութիւնները ըլլան աւելի հաւաքածոյ մը, քան մէկ անձի գրութիւններ:

(Քաղաած Հ. Կիրեղ Վրդ. Քիպարեանի “Պատմութիւն Հայ Գրականութեան” հատորէն)

